

ԱՆԵՋԱԿԱՆ ԲԱՌԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Մ. Ե. ԱՍԱՏՐՅԱՆ

Գրաբարում կան մի շարք գոյականներ, որոնք ունեն միայն հոգնակի թվի ձև, չնայած իմաստով եզակի են։ Այդ բառերից են, օրինակ, կեանք, աղօթք, միտք, անէծք, դժոխք և այլն։ Այս անեզական (լատ. *pluralia tantum*) բառերի կատեգորիան հատուկ է ոչ միայն հայերենին, այլև հնդեվրոպական մյուս լեզուներին։

Ընչով է բացատրվում այդ կատեգորիայի գոյությունը լեզուներում։ Ոչ բոլոր դեպքերում է, որ եզակի և հոգնակի թվերը բացարձակորեն հակադրվում են իրար, այսինքն՝ եզակին ցույց է տալիս մեկ առարկա, իսկ հոգնակին՝ մեկից ավելի առարկաներ։ Հոգնակի թիվը, բուն հոգնակիությունից բացի, արտահայտում է նաև հավարականություն, ամբողջություն։ Դրա հետևանքով հոգնակի թիվը ոչ միայն ցույց է տալիս մեկից ավելի առարկաներ, այլև այն եզակի առարկան, որը բաղկացած է երկու կամ զանազան մասերից։ Պրոֆ. Աճառյանը այդ մասին գրում է. «Հնդեվրոպական լեզվախմբի մեջ էլ հոգնակին հատուկ չէ միայն մի առարկայի, որ երկուսից ավելի է թվով, այլև այնպիսի առարկաների, որոնք թեև մի հատ են, բայց բաղկացած են զանազան մասերից, այսպես՝ հն. *αἰεὶς* «աղ», *πρεσβεία* «միտ», լատ. *carne* «միտ», հոմեր. *ζεία* «հատիկ»--վեդ. *yavā's*, հոմեր. *οἰχέα*, լատ. *bigae*, հայ. *kola* և հյ. «կառք» հոգնակի են։ Նույնիսկ երբ առարկան երկու մասից է բաղկացած, դարձյալ գործ է ածվում հոգնակի ձևով. ինչպես՝ գուռը, որ վեդ. *dūras*, հայ. *dvīri*, լիթ. *duras*, հյ. գուռք, հն. *धूरय*, լատ. *forēs* ձևերով հոգնակի է. նույնպես -- լիթ. *nasrai* «կոկորդ», սանս. *osthas* «չրթուներ» -- հայ. *usta* «քերան» հոգնակի են ձևով։ Այս պատճառով կան բառեր, որոնք անեզական են, այսինքն՝ միմիայն հոգնակի ձևեր ունեն. ինչպես՝ լատ. *antae* -- վեդ. *a'tas* «գորան շեմերը» կամ հատկապես քաղաքների անունները, ինչպես *Αθήναι* «Աթենք», *Πλάτεια* «Պլատեա», հյ. Հայք, Վիրք, Բղնունիք, Կարս, Ագուլիս, Մասիս (հգ. հյց.) և այլն»¹։

Հնդեվրոպական լեզուների մեջ անեզական բառերի առաջացման մասին այս նույն բացատրությունն է տալիս նաև Ա. Մեյլը²։

Պրոֆ. Աճառյանը գտնում է, որ հայերենի անեզական բառերի որոշ խմբերի հնությունը հասնում է մինչև հնդեվրոպական հիմք լեզուն։ Նա գրում է. «Հին հայերենը նախալեզվյան այս գոյությունը պահել է. երևա՛ր գործածվում է հոգնակի ձևով մի միակ առարկայի համար, որովհետև երկու մասերից է բաղկացած, ճիշտ ինչ. հն. *πρωτοπαι* հոմանիշը, հյ. աղաւթք համապատասխանում է ճիշտ լատ. *precēs* ձևին և այլն։ Սակայն ավելի հետո միության դադարի հետզհետե հաղթանակում է. այսպես ստեղծվում է գուռն, փխ. լատ. *forēs*, հրդ. *turi*, լիթ. *dūrys* անեզականները»³։

Հայերենի անեզական բառերը հսկայական թիվ են կազմում. նրանց բանակը հազարից անցնում է։ Առաջին անգամ դրանց գիտական ուսումնասիրությունը կատարել է պրոֆ. Հ. Աճառյանը իր «Լիակատար քերականություն» երրորդ հատորում։ Ծիշտ է, Աճառյանից առաջ ուրիշները ևս խոսել են բառերի այդ խմբի մասին, բայց նրանց մոտ չենք գտնում ոչ դրանց գիտական վերլուծությունը, ոչ էլ դասակարգումը։

¹ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 3, Երևան, 1957, էջ 236 - 237։

² Տե՛ս А. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.—Л., 1938, էջ 341։

³ Նույն տեղում, էջ 237։

Պրոֆ. Աճառյանը հայերենի անեղական բառերը բաժանում է երեք իմաստաբանական խմբերի.

ա) Անեղական բառեր, որոնք թեև ցույց են տալիս մի ամբողջական առարկա, բայց բաղկացած են զանազան մասերից. օրինակ՝ կառք.

բ) Երկրների և գավառների անուններ. ինչպես՝ Հայք, Վիրք, Սիրիք.

գ) Վերացական բառեր. ինչպես՝ վարք, կրոնք, միտք և այլն:

Այնուհետև նա անեղական բառերը միաժամանակ բաժանում է զանազան ձևաբանական խմբերի:

Անեղական բառերի առաջին խումբն են կազմում աճառ վերջավորություն ունեցող բառերը, որոնք ցույց են տալիս բայական մի գործողություն (բայանուն), ինչպես՝ աղաչանք, լլկանք, սփռվածք և այլն:

Երկրորդ խումբն են կազմում գրաբարյան ի վերջավորություն ունեցող ապառնի դերբայներին ֆ-ով կազմված ձևերը, որոնք այսպիսով դառնում են անեղական գոյականներ, ինչպես՝ լսելիք, խառնելիք, ծամելիք, ճեմելիք և այլն:

«Երրորդ խումբը կազմում են աշխարհագրաբար այն բառերը, որոնք մտնում վերջավորություն ունեն և բայից շինված գոյական են. սրանք գրաբարի մեջ հոգնակի են և նրանց եզակին լինում է ումն. իսկ աշխարհագրաբար նրանք եզակի են և նրանց հոգնակին լինում է մունքներ. հետևաբար և նրանք աշխարհագրաբար անեղական են»¹. այդ բառերից են՝ բաժանմունք, զգացմունք, ուսմունք և այլն:

Չորրորդ խմբի մեջ մտնում են այն բառերը, որոնք կազմված են զանազան հոգնակերտ մասնիկներով և որոնք կարելի է կոչել «անկանոն հոգնակի», ինչպես՝ ազդերանք, բարձունք, թվունք և այլն²:

Այս չորս խմբերից գուրս են մնում ահագին քանակությամբ (600-ից ավելի) անեղականներ, որոնք Աճառյանը բերում է առանձին ցուցակում (լջք 865—870)՝ բաղկելով ՆՀԲ-ից:

Ամենից առաջ պետք է նկատել, որ պրոֆ. Աճառյանը «անեղական» տերմինը գործածում է շատ լայն իմաստով: Նրա համար անեղական է ֆ-ով վերջացող ամեն մի բառ՝ լինի գրաբարում, թե աշխարհագրաբար, որի մեջ ֆ-ն առանց է և արմատին չի պատկանում: Ինչպես տեսանք, նա անեղական է համարում նաև ժամանակակից հայերենի մտնում ածանցով կազմված գոյականները՝ ուսմունք, զգացմունք, բաժանմունք և այլն: Բայց չէ՞ որ այս բառերը արդի հայերենում թվով եզակի են, և սրանց հոգնակին կանոնավոր կերպով կազմվում է ներ վերջավորությամբ՝ ուսմունքներ, զգացմունքներ, բաժանմունքներ: Ուրեմն՝ ժամանակակից հայերենի տեսակետից այդ բառերը անեղական չի կարելի համարել: Դրանք դրա՞քարում հոգնակի իմաստ են արտահայտել. բայց բանի որ ունեցել են իրենց համապատասխան ումն ձևով եզակին՝ ուսումն, զգացումն, բաժանումն, հետևաբար և այդ բառերը անեղական չի կարելի համարել նաև գրաբարի տեսակետից: Նշանակում է պրոֆ. Աճառյանի բերած երրորդ խմբի բառերը անեղական չեն եղել մեր լեզվի և ոչ մի փուլում:

Այնուհետև, Հ. Աճառյանը, ինչպես տեսանք, որպես անեղականների առանձին խումբ է ներկայացնում մի շարք բառեր, որոնք կազմված են զանազան հոգնակերտ մասնիկներով. դրանք կարելի է կոչել «անկանոն հոգնակի»: Այս խմբի մեջ են մտնում նաև այս տիպի բառեր՝ իշանք, ձիանք, իշեարք, այծիք, հսկայունք, հոնտորայք, իշխանայք, խոյեանք, բուերք, ձուանք³ և այլն, որոնք ունեն իրենց եզակի ձևերը՝ իշ, ձի, այծ, հսկայ, հոնտոր, իշխան և այլն. հետևաբար դրանք ևս անեղական չի կարելի համարել: Հոգնակի թվի «անկանոն» կազմությունը բավարար հիմք չէ այդ բառերը անեղական կոչելու համար:

Իմիջիայուց նկատենք, որ «անկանոն հոգնակիների» խմբի մեջ գրված են նաև կախարհա՞ղանք և փշրանք բառերը, որոնք աճառ ածանցով կազմված են կախարհում և փշրել բայերից, ուստի և պետք է մտնեն անեղականների առաջին (աճառ ածանցով կազմված) խմբի մեջ:

Այս նախնական դիտողություններից հետո անցնենք անեղական բառերի վերլուծությանը և ամենից առաջ պարզենք, թե նրանք ինչ ձևաբանական խմբերի կարելի է բաժանել:

¹ Հ. Աճառյան, նշվ. աշխ., հատ. 3, էջ 863:

² Նույն տեղում, էջ 863 - 864:

³ Նույն տեղում, էջ 864:

1. ԱՆԵՁԱԿԱՆՆԵՐԻ ՁԵՎԱՐԱՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ

Երբ ուսումնասիրում ենք գրաբարի անեզական բառերը, նախ և առաջ նկատում ենք, որ նրանք բացարձակ մեծամասնությամբ ածանցավոր բառեր են՝ կազմված զանազան ածանցներից, բայց որում բոլոր դեպքերում առկա է մասնիկը՝ կամ առանձին, կամ այլ ածանցների հետ բաղադրված: Այս տեսակետից անհրաժեշտ է բաժանվում են հետևյալ խմբերի:

ա) Բայարևերից անց ածանցով կազմված անեզականներ:— Գրաբարում մեծ թիվ են կազմում ասմ ածանցով կազմված անեզականները: Կրանց բանակր հասնում է մի բանի հարյուրի: Այդ ածանցով գրաբարում կազմվել են բազմաթիվ գոյականներ՝ որպես գործողության անուններ (բայանուններ), որոշ դեպքերում ցույց տալով նաև գործողության հետևանքը, ինչպես՝ Եղաշեմ/Եղաշան, աշխատեմ/աշխատանք, աղերսեմ/աղերսանք և այլն: Բայառմատներից բայանունների կազմության այդ աղբյուր չափ արդյունավոր է եղել, և գրաբարյան անեզականների բանակր անընդհատ ավելացել է նաև այդ ածանցով կազմվող բառերի հաշվին:

Գրաբարում անց ածանցով անեզական բայանուններ են կազմվում նաև ներգործական, և՛ շեղոր սեռի բայերից, ինչպես՝ աղնատանք (աղճատեմ), ամոխանք (ամոքեմ), անազանք (անարգեմ), ապաշաւանք (ապաշաւեմ), արգանատանք (արգահատեմ), արհամարհանք (արհամարհեմ), ափսոսանք (ափսոսեմ), բաղձանք (բաղձեմ), բանադրանք (բանադրեմ), բարբալանք (բարբալեմ), բերկրանք (բերկրեմ), զարշանք (զարշեմ), զեղզեղանք (զեղզեղեմ), զառանցանք (զառանցանեմ), զրօսանք (զրօսեմ), զրպարտանք (զրպարտեմ), ըղձանք (ըղձեմ), բախանձանք (բախանձեմ), բախձանք (բախձեմ), լկանք (լկեմ), խայտանք (խայտեմ), խաբդաւանք (խաբդաւանեմ), խնդրանք (խնդրեմ), ծփանք (ծփեմ), կապանք (կապեմ) և այլն:

Բայառմատներից բայանունների անց ածանցով այս կազմությունը արդյունավոր է նաև ժամանակակից հայերենում, և այս ձևով կազմված բառերի մեծ մասը գործածական է նաև այժմ, միայն այն տարբերությամբ, որ դրանք բաժանվում են եզակի, և դրանց հոգնակին կազմվում է ներ մասնիկի միջոցով (հայհոյանք-հայհոյանքներ, տանջանք-տանջանքներ, կշտամբանք-կշտամբանքներ): Այդ բառերի նմանակությամբ արդի հայերենում կազմվում են նոր բառեր, որոնք գրաբարում չեն եղել, ինչպես՝ զուրգուրանք (զուրգուրել բայից), դավանանք (զավանել), երգիծանք (երգիծել), քորովանք (թթովել), հեղձանք (հեղձել), նողկանք (նողկալ), վիրավորանք (վիրավորել), համակրանք (համակրել), երազանք (երազել), բճնանք (բճնել) և այլն:

Անց մասնիկը գրաբարյան (ինչպես և արդի հայերենի) բառերի մեջ ունեցել է սոսկ բառակազմական նշանակություն: Այդ մասին է վկայում թեկուզ և այն, որ անց ածանցով կազմված բայանուններին գուրահեռ գրաբարում նույնիմաստ կամ իմաստային որոշ երանգներով բայանուններ են կազմվել նաև ումն և ուրիւն ածանցներով (որոնք ումնեցել են եզակի իմաստ): Հաճախ նույն բայից անց, ումն կամ ուրիւն ածանցներով կազմվում էին երկու կամ երեք ձև՝ որպես բայանուն. այս ձևերից են՝ ալեկոծանք/ալեկոծումն՝ ալեկոծութիւն, անարգանք/ումն/ութիւն, անզոտանք/ումն/ութիւն, բանադրանք/ութիւն, բարբալանք/ումն, բերկրանք/ումն/ութիւն, զրժանք/ումն/ութիւն, զառանցանք/ութիւն, զարգաբանք/ումն, զարհուրանք/ումն, զրպարտանք/ութիւն, ըղձանք/ումն/ութիւն, թախանձանք/ումն/ութիւն և այլն:

Բնչով է բացատրվում անց ածանցով կազմված անեզականների գոյությունը գրաբարում: Ինչպես արդեն ասել ենք, կրանք կազմվում են բայառմատներից և ցույց են տալիս գործողության անուն: Գործողության անվան մեջ, բայանվան մեջ ինքնին առկա է տեսականության, որոշ իմաստով բազմակիության, ուրեմն՝ հոգնակիության իմաստը: Անց ածանցով կազմված բայանունները արդի հայերենում եզակի են, բայց և այնպես բառիմաստային տեսակետից նրանց մեջ այս կամ այն չափով առկա է բազմակիության, հոգնակիության իմաստը, ինչպես՝ Եղաշեմ, Եղաշան, աշխատեմ և այլն: Ահա բայանունների արտահայտած բառիմաստային այդ առանձնահատկությունն է սլաւոնաբան, որ նրանք գրաբարում միավորում են զեպի անեզականության կուսեզորյան:

Գրաբարյան անց վերջավորվող անեզականների հոլովական առանձնահատկությունն այն է, որ դրանք բոլորն էլ հոլովվում են ա հոլովիչով. ինչպես՝ աղերսանք-աղերսանաց, բարբալանք-բարբալանաց, անարգանք-անարգանաք և այլն: Ուրեմն՝ հոլովական տեսակետից ևս այդ բառերը սերտ միասնություն են կազմում:

բ) Բայարներից Բ ածանցով անեղականները.— Գրաբարյան անեղականների մյուս խումբն են կազմում բայարներից Բ-ով կազմված ձևերը: Մեր հին լեզվում կան բազմաթիվ բայեր, որոնք ունեն իրենց համապատասխան գոյականները. շատ հաճախ դժվար է որոշել բայն է գոյականից առաջացել, թե՛ ընդհակառակը: Այսպես՝ խնդրել, կատարել, սիրել, հոտել, գործել, գրել, պատվել, թրել, կարգել բայերը ունեն իրենց համապատասխան գոյականները՝ խնդիր, կատար, սիր, հոտ, գործ, գիր, պատիւ, թուր, կարգ: Նույն դրույթյան մեջ են նաև գրաբարյան անեղականների և նրանց համապատասխան բայերի մի մասը:

Այսպես, ունենք՝ կամիմ-կամք, խօսիմ-խօսք, հանեմ-հանք և այլն, և դժվար է ասել, թե դրանցից որը պետք է համարել սկզբնական ձև: Մական դրանց մեծ մասը, անկասկած, ածանցված են բայերից, և միայն մի մասի համար ավելի հավանական կարող է համարվել հակառակ ենթադրությունը:

Ք-ածանցով կազմված և համապատասխան բայեր ունեցող անեղականները գրաբարում մոտավորապես հետևյալներն են. ագոյցք (ագուցանեմ), ածք (ածեմ), աղօթք (աղօթեմ), անլծք (անլծանեմ), անցք (անցանեմ), առանցք (առանցանեմ), ասք (ասեմ), բաշխք (բաշխեմ), բաղձք (բաղձեմ), բերք (բերեմ), գնացք (գնամ), գոյք (գում), դէպք (դիպիմ), դիրք (դնեմ), ելք (ելանեմ), եկք (եկի), զարմացք (զարմանամ), զրոյցք (զրուցեմ), էջք (էջանեմ), ընթացք (ընթանամ), թռիչք (թռչեմ), իմացք (իմանամ), լիցք (լնում), լուացք (լուանամ), խաղացք (խաղամ), խոսք (խօսիմ), կամք (կամիմ), կայք (կայ), կիրք (կրեմ), հայեացք (հայիմ), հանք (հանեմ), հաւատք (հաւատամ), հմայք (հմայեմ), հնարք (հնարեմ), հոսք (հոսեմ), մեղք (մեղանչեմ), մթերք (մթերեմ), մնացք (մնամ), մոռացք (մոռանամ), մուտք (մտանեմ), յարոյցք (յարուցանեմ), նզովք (նզովեմ), շէնք (շինեմ), շնորհք (շնորհեմ), պահք (պահեմ), ջանք (ջանամ), սլացք (սլանամ), ստացք (ստանամ), վազք (վազեմ), վայելք (վայելեմ), տեսք (տեսանեմ), տուգանք (տուգանեմ), տուրք (տամ), ցանք (ցանեմ), ցնորք (ցնորիմ), ցուրք (ցուամ):

Ընդհանուր բառիմաստային տեսակետից այդ խմբի անեղականները նախորդներից տարբերվում են նրանով, որ էթն առաջինները գերազանցորեն ցույց են տալիս գործողության անուն՝ մոտավորապես հավասարվելով ումն ածանցով կազմված ձևերին, ապա վերջիններիս մեջ դրան դուգահեռ զարգացել է նաև առարկայական իմաստ:

Այսպես, բերված բառերի մի մասը ցույց է տալիս գործողության անուն, ինչպես՝ զամացք, ընթացք, խաղացք, վազք և այլն. մի մասը հեռանալով իր նախնական իմաստից ցույց է տալիս կոնկրետ առարկա, ինչպես՝ ագոյցք (լծակ), ասք, իսկ մեծ մասի մեջ գործողության անվան և կոնկրետ անվան իմաստները համատեղվում են, ինչպես՝ անցք 1. անցնելը, 2. անցնելու ճամփա, գնացք 1. գնալը, 2. ճամփա, բայելք տեղ. ղիւր 1. դնելը, 2. գիրք, կարգ, ելք 1. ելնելը, 2. անցք, ճամփա և այլն:

Հոլովական տեսակետից նախորդ խմբի անեղականներից տարբերվում են նրանով, որ դրանք բացարձակ մեծամասնությամբ հոլովվում են ի հոլովիչով, օրինակ՝ աղօթք-աղօթիչ, անլծք-անլծից, անցք-անցից, գնացք-գնացից, ընթացք-ընթացից և այլն: Այս հոլովումից դուրս են մնում միայն մի քանի բառեր, ինչպես՝ զրոյցք-զրուցաց, կամք-կամաց, հանք-հանաց, շնորհք-շնորհաց, մեղք-մեղաց, հաւատք-հաւատաց, պահք-պահաց, տուրք-տուրց:

գ) Անեղականների հաջորդ խումբն են կազմում ի հանգող ապառնի գերբայից Բ ածանցով կազմված ձևերը: Գրաբարյան ի վերջավորություն ունեցող ապառնի գերբայը, հատկապես ներգործական սեռի բայերի դեպքում, արտահայտում էր արգի հայերենի ենթակայական գերբայի իմաստը, ինչպես՝ լսելի նշանակում էր լսող, օրինակ՝ «Զի թի որ լսելի միայն իցէ բանին և ոչ առնելի» (Եթե մեկը միայն խոսք լսող է և ոչ թե անող): Նույն գերբայը ստանալով Բ մասնիկը՝ արտահայտում էր հոգնակի իմաստ, ինչպես՝ «Էինիչիք առնելիք բանին, և մի՛ լսելիք միայն համարեալիք զանձինս» (Եղև բան կատարողներ և ոչ թե միայն լսողներ համարեցեք ձեզ): Բայց նույն ապառնի գերբայը որոշ բառերի դեպքում ստանալով Բ ածանցը ոչ թե արտահայտում է գերբայի հոգնակիությունը, այլ կազմում է նոր իմաստով նոր բառ: Այսպես, լսելիք բառը, բացի լսողների իմաստից, ունի նաև արգի իմաստը, օր. «Լսելիք մեր առողջացան զանախաւորութիւն Երկնաւոր»: Նույն ձևով էլ ապառնի գերբայներից Բ-ով կազմված անեղականներ են հետևյալները. ամբառնալիք (բան վերցնելու ձող), արբելիք (հարեցողություն):

¹ Տե՛ս Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 297—298:

բառնալիք (ծող), ելանելիք (աստիճան), զարմանալիք, զղենիք (հագուստ), զենիք (զոհանելու անասուն), ըմպելի(ք) լալիք (լաց, ողբ), ծխանելիք (ծխելիք), կատարելիք (վերջ, վախճան), հեծանելիք (հեծնելու կառք, գրաստ), հրաւառելիք (կրակ վառելու գործիք), մա-
նելիք (մանելու գործիք), սպառնալիք (սպառնացում), յիշելիք (հիշատակ), նայելիք (աչք), հստոտելիք, խառնելիք (պարան), խեղդելիք (խեղդան), շոշափելիք, ունելիք, տեսանելիք և այլն:

Բայերից անունների կազմության այս եղանակը ժամանակակից հայերենում ավելի բեղմ-
նավոր է դարձել, և անորոշ դերբայներից ի՞նչ ածանցով այժմ կազմվում են բազմաթիվ բառեր,
օրինակ՝ ասելիք, գրելիք, բռնելիք, առաջարկելիք, գալիք, պատմելիք, անելիք և այլն:

Գրաբարյան և հանգող ապառնի դերբայներից կազմված անեզականների հոլովական առանձ-
նահատակությունն այն է, որ դրանք հոլովվում են ա հոլովիչով, ըստ որում Բ-ից առաջ
գտնվող ի-ն, հանդիպելով ա-ին, դառնում է և, ինչպես՝ լսելիք-լսելեաց, սպառնալիք-սպառ-
նալեաց, ըմպելիք-ըմպելեաց և այլն:

դ) Անեզականների հաջորդ խումբն են կազմում ածականներից Բ-ով կազմված նոր բա-
ռերը: Դրանք գրաբարում բավականին շատ են, ինչպես՝ արքունի/արքունիք, բարի/բարիք,
զաղտնի/զաղտնիք, բնութանի/բնութանիք, հաճոյ/հաճոյք, հայրենի/հայրենիք, հրաշալի/հրա-
շալիք, արժանի/արժանիք և այլն:

Նույն ձևով սակավաթիվ բառեր կան կազմված նաև գոյականներից, ինչպես՝ համեմ (կա-
նաչի)-համեմք (համ տվող բաներ), խայթոց-խայթոցք (վերք), պահ (ժամանակ)-պահք
(պաս). թեև վերջինս կարող է կազմված լինել նաև պահմ բայից և մտնել երկրորդ խմբի մեջ:

է) Գրաբարյան անեզականների մյուս խումբն են կազմում գոյականներից, ածականներից
և բայաբառներից ի՞նչ ածանցով կազմված ձևերը. դրանցից են՝ արգասիք, աւանդիք, աւետիք,
դրուատիք, երախտիք, երաշխիք, երդիք, բնթրիք, կարծիք, հարկիք, հաւաստիք, շնորհիք, ուտիք,
աշարտիք, ջախջախիք, տաժանիք, հարսանիք, նաև բազանիք:

Անեզականների այս կազմությունը գրաբարում արդյունավոր չի եղել, և ի՞նչ ածանցով կազ-
մված բառերը մեծ թիվ չեն կազմում: Դրանք ևս հոլովվում են ա հոլովիչով, օրինակ՝ աւետիք-
աւետեաց, կարծիք-կարծեաց և այլն:

զ) Անեզականների մի խումբ են կազմում բայաբառներից ի՞նչ ածանցով կազմված բառերը.
դրանք մոտավորապես անց ածանցով կազմված անեզականների իմաստն են ունեցել: Դրանցից
են՝ նախատիք (նախատեմ բայից), կախարդիք (կախարդեմ), քծիք (քծնիմ), դատիք (դա-
տիմ), գահինք (գահեմ): Անեզականների կազմության այս տիպը ևս գրաբարում բեղմնավոր
չի եղել:

է) Գրաբարում կան մի շարք գոյականներ, որոնք կազմված են ունի մասնիկով. դրան-
ցից են՝ արտեանունք, բարձունք, երկունք (երկն), թիկունք (թեկն), իրաւունք (իրաւ), լորձունք
(լորձն), խոնջանունք (խոնջան), կնձունք (կունձն), կրկունք, (կրուկ), մասունք, մկանունք
(մկան), մսանունք (մսան), ուլունք (ուլն), պակունք (պտուկ), ռնգունք (ռունգն), սկզբունք
(սկիզբն), փայլատակունք (փայլատակն), քրտունք/ինք (քիտն), վանկունք (խուց) և այլն:
Ինչպես ցույց են տալիս օրինակները, բերված գոյականների մեծ մասը ունեն իրենց եզակի
ձևերը՝ երկունք/երկն, թիկունք/թեկն և այլն, բայց բերված համապատասխան զույգ ձևերը
եղել են նույնիմաստ: Այսպես. երկունք ձևը ոչ թե արտահայտել է երկն ձևի հոգնակիությունը,
այլ այդ երկու բառերն էլ նույն իմաստն են ունեցել՝ չնայած իրար որ կազմության ձևով երկունք
բառը երկն բառի հոգնակին է: Ահա այս հանգամանքը նկատի ունենալով է, որ վերևի բառերը
համարում ենք անեզականների առանձին խումբ: Բերված բառերից բարձունքը և մասունքը
ունեն համապատասխան բաժնի և մասն ձևերը, բայց որովհետև հոգնակի թվում այլ իմաստ են
արտահայտում, այդ պատճառով սրանք ևս դրեցինք անեզականների խմբի մեջ: Արտեանունք
բառի եզակին ևս ունի այլ իմաստ, այն է՝ «լեռան գլուխ»:

ը) Անեզականների մի այլ խումբ են ազգերի և ցեղերի անուններից կազմված տեղանուն-
ները: Ք մասնիկը զրվելով ազգերի և ցեղերի անունների վրա՝ ոչ միայն ցույց է տալիս հոգ-
նակիություն, այլև տեղ, երկիր, աշխարհ, այսինքն՝ Բ-ն առաջին դեպքում ունի ձևակազմական,
խոհ երկրորդ դեպքում՝ բառակազմական իմաստ: Այսպես, Հայք նշանակում է հայեր և Հայաս-
տան, Պարսք՝ պարսիկներ և Պարսկաստան, Ռչտունիք՝ ուշտունիներ և Ռչտունյաց աշխարհ և
այլն: Վերջին իմաստով, ինչպես տեսնում ենք, Բ-ն համանիշ է ստան ածանցին: Ք-ի այդ իմաստ-
ներից հնագույնը եղել է հոգնակիության իմաստը, որից և զարգացել է տեղի իմաստը:

Անեզականների կազմության այս ձևը շատ տարածված է եղել, և հնուց ավանդված ունենք
բազմաթիվ երկրների ու գավառների անուններ, ինչպես՝ Հայք, Վիրք, Պարսք, Յոյնք, Ասորիք,
Աղուանք, Քուշանք, Հնդկիք, Ապահունիք, Գամիրք, Տայք, Սիրիք, Ռչտունիք և այլն:

թ) Անեղական բառերի նշված այս խմբերից դուրս են մնում մի շարք բառեր. դրանցից են՝ ազուգայք, ալիք, ամուլ(ք), այտ(ք), անդունդք, աչք, ապարանք, բաշք, գովք, գիր(ք), գիրկ(ք) դէմք, դէպք, դժոխք, եզերք, երես(ք), երկինք(ք), զրահք, ընդերք, ժանիք, լանջք, լուլք, խնջոյ(ք), խոխոջք, կամք, կառք, կամխք, կուռք, կուրծք, կրօն(ք), հաւատ(ք), հետք, մահիճք, մացառք, մեղք, մէջք, միտք, մօրուք, յօնք, պատճառք, պէտք, սանդուղք, սառնամանիք, սեւամք, սնարք, ստիւք, սրունք, վանք, վարտիք, վարք, տանիք, տիեզերք, ցաւք, փառք, քողք, բիւք, քղանցք, բունք, օձիք, օրենք և այլն:

Ինչ է տալիս մեզ բերված բառերի ընդհանուր իմաստաբանական վերլուծությունը. Ամենից առաջ այն, որ այս խմբի բառերի մեծամասնությունը նշում է այնպիսի առարկաներ, որոնք բաղկացած են օուզ կամ զանազան մասերից, ինչպիսի՝ ալիք, այտք, աչք, երեսք, երկինք, սրահք, ժանիք, լանջք և այլն: Հայերենի անեղականների հնագույն շերտն են կազմում հենց այս տիպի բառերը: Հավանաբար նախագրաբարյան շրջանում անեղական են եղել միայն այն առարկաների անունները, որոնք բաղկացած են եղել զույգ կամ զանազան մասերից, արտահայտել են մի քանի ամբողջություն: Հետագայում անեղականների քանակը անընդհատ համարվում է, բայց ոչ թե այս, այլ ուրիշ հիմքի վրա: Արդեն գրաբարյան շրջանում և մասնիկի ձևակազմական ֆունկցիային զուգահեռ զարգացել էր նաև բառակազմական ֆունկցիան: Եվ իրոք, գրաբարյան անեղականների մեծագույն մասի գոյությունը պայմանավորվում է նրանով, որ գրաբարում և մասնիկի մեջ համատեղվում էին և՛ ձևակազմական (հոգնակերտ), և՛ բառակազմական ֆունկցիաները: Չէ՞ որ գրաբարի անեղականները մեծ մասամբ և՛ ածանցով կազմված բառեր են: Ընդհանուր եզրակացությունը կլինի հետևյալը.

Սկզբնապես առաջանալով ու ձևավորվելով իմաստաբանական հիմքի վրա և իւր մեջ ընդգրկելով այնպիսի առարկաների անուններ, որոնք բաղկացած են զույգ կամ զանազան մասերից, արտահայտում են մի բարդ ամբողջություն, հետագայում անեղականության կատեգորիայի մեջ մտնող բառերի քանակը անընդհատ մեծանում է, որովհետև և՛ մասնիկի միաժամանակ ձևով է բերում նաև բառակազմական ֆունկցիա: Այսպիսով, խախտվում է նաև անեղականների ընդհանուր բառիմաստային միասնությունը, և և՛ ածանցի արտահայտած տարբեր իմաստներին զուգընթաց այդ կատեգորիայի մեջ են մտնում բառիմաստային այլևայլ ընդհանրություններ՝ օւնեցող բառեր:

2. ԱՆԵՂԱԿԱՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ

Բաղադրյալ անեղականների բառային ընդհանուր իմաստը կախված է այն բանից, թե նրանք ինչպիսի բառերից և ինչ ածանցներով են կազմվում: Այսպես, բայաբաններից աճ և իճ ածանցներով կազմվածները բայանուններ են, ապառնի դերբայից և՛ ածանցով կազմվածները գործիքի կամ գործարանի անուններ և այլն: Առանձին խումբ են կազմում նաև զույգ և զանազան մասերից կազմված առարկաների անունները, երկրների, զավառների անունները և այլն: Այս հիմքով անեղականները կարելի է բաժանել հետևյալ իմաստաբանական խմբերի.

ա) Գործողության անուն (բայանուն) արտահայտող անեղականներ. դրանք ամենամեծ թիվն են կազմում և կազմվում են բայաբաններից աճ (անարգանք), և (վազք) և իճ (նախադիր) մասնիկներով:

բ) Տեղանուններ ցույց տվող անեղականներ. դրանք ևս բավականին շատ են և կազմվում են ազգերի և ցեղերի անուններից և՛ ածանցով (Հայք, Սիրիք):

գ) Գործիք կամ գործարան ցույց տվող անեղականներ. դրանք կազմվում են ապառնի դերբայից և՛ ածանցով (խեղդելիք, լսելիք):

դ) Զույգ կամ զանազան մասերից կազմված առարկաներ ցույց տվող անեղականներ (երեսք, զրահք):

ե) Մարդու բարոյական զանազան հատկություններ ցույց տվող անեղականներ (բարք, վարք, փառք, պարտք, կամք, միտք):

զ) Կրոնական զանազան հասկացություններ արտահայտող անեղականներ (աղօթք, անէծք, աւետիք, դժոխք, կուռք, դիք, կրօնք. մեղք, նաւակատիք, նզովք, ուտիք, հավատք):

է) Առանձին խումբ են կազմում երկու (բ), երեք, չորս անեղական բաղկանուններ.

ը) Բերված այս խմբերից դուրս են մնում մի շարք անեղականներ, որոնք իմաստաբանական ընդհանրություն չունեն (սառնամանիք, պատճառք, ցավք և այլն):

3. ԶՈՒՅԿ ԶԵՂԵՐ

Գրաբարում կան մի շարք բառեր, որոնք ունեն Բ-ով և առանց Բ-ի հարաբերակից ձևեր: Այսպես, երկինք, հաւատ, կամ, դէպ, միտ, ել, պէտք ընկնի, Բ-ով հարաբերակից և նույնիմաստ երկին, հաւատ, կամ, դէպ, միտ, ել, պէտք ձևերը: Այդ մասին ևն վկայում հետևյալ փաստերը:

«Վկայ ևն մեզ երկինք ևմ երկիր» (Եղիշե, 23)¹:

«...Հաւատաց նա յԱստուած կենդանի յարարիչն երկնի և երկրի» (Եղիշե, 31):

«...դի պահեսցէ զնոսա ի հաւատս իւրեանց» (Աղաթանգեղոս, 120, էջ 69)²:

«...դուխտ հաստատութեան հաւատոյ» (Փափասոս, 13)³:

«սա ևկն կամօք ի մահ» (Եղիշե, 39):

«ոչ իւրեանց կամ» (Փարպեցի, 41)⁴:

«Զի բախտ անձնաւոր ինչ չէ, ալլ դէպ աջողութեան» (Եղիշե, 91)⁵:

«դէպ եղև դի դարձեալ անդրէն ի բարին շոջեցաւ» (Եղիշե, 33):

«Ծածաղեցաւ Սառս րնդ միտս» (Մեն, Ը, 21):

«Եթէ այն ինչ ի մտի էր նորա» (Եղիշե, 90):

«մոտ ոչ գտանէր, բայց ի կողմանէ դոյզն ել Լին» (Խորենացի, 319)⁶:

«Եւ զեւ և զմոտ բարեկամացս սրպէս ի տունընեան, նոյնպէս և զիշերի սահմանէր» (Խորենացի, 92):

«զի՞նչ պէտք անմիտ և անհանձար բանից յարմարանք» (Խորենացի, 93—91):

«Ի՞նչ ոչ է պէտք գայնմանէ» (Աղաթանգեղոս, 118, էջ 69):

Գրաբարում այսպիսի զույգ ձևերի թիվը բավականին շատ է եղել: Դրանցից են՝

Ալիք/ալի, աղիք/աղի, ամուր/ամու, այտր/այտ, անդունդ/անդունդ, անձուկ/անձուկ, անուրջ/անուրջ, անցր/անց, առանցր/առանց, արշաւանք/արշաւան, բաշխր/բաշխ, բարուր/բարուր, բովր/բով, գիրք/գիր, գիրք/գիր, գնացր/գնաց, զողօք/զողօք, զոյր/զոյ, զազազր/զազազ, զէմր/զէմ, զէպր/զէպ, ելք/ել, երեսք/երես, երկր/երկ, երկանք/երկան, երկինք/երկին, զրահր/զրահ, զրոյցր/զրոյց, էջր/էջ, րնթացր/րնթաց, ժանիր/ժանի, իմացր/իմաց, ինչր/ինչ, խաղացր/խաղաց, խշտիր/խշտի, խօսք/խօս, ծնունդր/ծնունդ, կաղանդր/կաղանդ, կամր/կամ, կայր/կայ, կացր/կաց, կերպարանք/կերպարան, կերպր/կերպ, կորովր/կորով, կրօնք/կրօն, հաւատր/հաւատ, հետր/հետ, հնարք/հնար, հոսր/հոս, հրահանգր/հրահանգ, հրաշք/հրաշ, մեղր/մեղ, մէջր/մէջ, մթերք/մթեր, միտր/միտ, մնացր/մնաց, մոռացր/մոռաց, մուտր/մուտ, մօրուր/մօրու, յորձանք/յորձան, յուրուր/յուրուր, յօնք/յօն, նդովր/նդով, ոլորուր/ոլորու, պաճուճանք/պաճուճան, պատճառք/պատճառ, պարուր/պարու, պէտք/պէտք, քանք/քան, սառնամանիք/սառնամանի, սնարք/սնար, վազր/վազ, վայելք/վայել, վանք/վան, վարանք/վարան, տուրք/տուր, սարք/սար, օրէնք/օրէն:

Եթե բերված ցուցակից հանենք բայահիմքերից Բ անցած կազմված ձևերը, ինչպես՝ անցր/անց, գնացր/գնաց, րնթացր/րնթաց և այլն, մեծ մասամբ կմնան այնպիսի բառեր, որոնք արտահայտում են զույգ մասերից բաղկացած կամ էլ բազմազան մասեր ունեցող առարկաներ ինչպես՝ ալիք/ալի, աղիք/աղի, այտր/այտ, զրահր/զրահ, երեսք/երես, մօրուր/մօրու և այլն: Պետք է ընդունել, որ այս զույգերից հնագույնները եղել են Բ-ով ձևերը, իսկ առանց Բ-ի (եղալի) ձևերը առաջացել են հետագայում՝ զույգ կամ զանազան մասերից բաղկացած առարկաների՝ որպես մի միասնական առարկայի բնութման զուգորթաց: Բայց առանց Բ-ի ձևերը զործածություն լայն ոլորտներ, տնտեսական, շին ունեցել և մեծ մասամբ դուրս են մղվել Բ ունեցող ձևերի կողմից:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բերված զույգերը մեծագույն մասով բացարձակ նույնանիշներ են եղել, օրինակ՝ ալիք/ալի, աղիք/աղի, այտր/այտ, անուրջ/անուրջ, երկինք/եր-

¹ Օգտագործված է՝ Եղիշե, Պատմութիւն Վարդանանց, Մոսկվա, 1892:

² Օգտագործված է՝ Աղաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:

³ Օգտագործված է՝ Փափասոս Բուդանդ, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1832:

⁴ Օգտագործված է՝ Պ. Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1904:

⁵ Օգտագործված է՝ Եղիշե, Եզդ ազանդոյ, Թիֆլիս, 1914:

⁶ Օգտագործված է՝ Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:

կին, կրօնը/կրօն, հաւատք/հաւատ, մօրութիւն/մօրութիւն, յօնը/յօն, սառնամանիք/սառնամանիք և այլն: Զույգ ձևերից մի մասի մեջ մշտնջենք են իմաստաբանական և ոճական գործածութեան տարբերութիւններ: Այսպէս, դէպք/դէպ բառերը որպէս գոյականներ նույնանիշներ են, բայց դէպ ձևը արտահայտում է նաև այլ իմաստներ, այն է՝ որպէս ածական նշանակում է «հարմար» (դէպ անուն), է և լինիմ բայերի հետ գործածվում է որպէս միադիմի բայ (դէպ է, դէպ լինի), ի նախդրի հետ արտահայտում է մակրայական իմաստ և նշանակում է «արժանավորապէս», «բարձր պատշաճ»: Բացի դրանից, գործածվում է նաև ոճերի մեջ՝ «ի դէպ գայ», «ի դէպ ելանել»:

Հետը/հետ բառերը որպէս գոյականներ նույնանիշներ են, բայց հետ բառը ունի նաև «ետերից» իմաստը, որը հետք բառը չի կարող ունենալ:

Պարտը/պարտ ձևերը որպէս գոյականներ նույնանիշ բառեր են, բայց պարտ բառը որպէս ածական ունի նաև «պարտավոր», «պատշաճ» իմաստները, այլև պարտ է ձևով գործածվում է որպէս միադիմի բայ:

Իմաստաբանական կամ ոճական գործածութեան տարբերութիւններ ունեն նաև դէմք/դեմ, կամք/կամ, միտք/միտ, օրէնք/օրէն և այլ գոյգները:

Բերված գոյգերի մի մասը այժմ դուրս է եկել գործածութիւնից, ինչպէս՝ բաշխը/բաշխ, իմացը/իմաց, խաղացը/խաղաց, կերտը/կերտ, մնացը/մնաց, մոռացը/մոռաց և այլն: Բայց դրանց մեծամասնութիւնը գործածական է նաև այժմ: Այդ գոյգերից արդի հայերենին են անցել զլխավորապէս Բ-ով ձևերը, ինչպէս՝ ալիք, աղիք, անցք, արշավանք, գիրք, գույք, դեմք, դէպք, ելք, երկանք, երկինք, բնթացք, ժանիք, խորք, կամք, կայք, կերպարանք, հետք, հոսք, հրաշք, մեղք, մեքք, մթերք, միտք, մուտք, մորուք, հորձանք, հոնք, նզովք, պաճուճանք, պետք, ջանք, սառնամանիք, վագր, վայելք, վանք, տուրք, օրենք: Բայց բիշ չեն նաև առանց Է-ի ձևերը, դրանցից են՝ ամուլ, այտ, անդունդ (գրաբարում հազվադէպ է գործածվել), անձուկ, անուրջ, բարուր, բով, գիրկ, գողոն, դագաղ, երես, երկ, գրահ, գրույց, խշտի, ծնունդ, կաղանդ, կրոն, հրահանգ, պատճառ, սնար, ցավ: Որոշ դէպքերում երկու ձևերն էլ գործածական են տարբեր իմաստներով, ինչպէս՝ դեմք/դեմ, մեքք/մեք, գոյք/գոյ, իսկ երբեմն էլ առանց իմաստի տարբերակման, ինչպէս՝ հնարք/հնար, հավատք/հավատ:

Պետք է նկատի ունենալ նաև հետևյալ հանգամանքը. գրաբարյան մի շարք անեզականներ (դրանք առանցք Է-ի չեն գործածվել) իրենց Բ-ն կորցրել են, ինչպէս՝ ակնակապիճք>ակնակապիճ, լանջք>լանջ, խոխոջք>խոխոջ, խրխինջք>խրխինջ, հունձք>հունձ, մահիճք>մահիճ, յիշոցք>հիշոց, նախճիրք>նախճիր:

Կա նաև հակառակ երևույթը, այն է՝ գրաբարյան մի քանի եզակի բառեր այժմ վերածվել են Բ-ով ձևերի: Այսպէս, գրաբարում գէն (սահմանք բառացի, ասէ՝ գէնն իւրեանց, խորենացի) գօր (սկսավ խօսել բնդ գօրն Հայոց՝ Փարպեցի), կաշառ (Աստուած մեծ ոչ առնու կաշառ, Բ օրէնք, Ժ), վէր (ունիմք վէր և սպիս բաղումս, Եղիշէ) բառերը եղել են եզակի ձևեր, իսկ դրանցից Բ-ով կազմավածները ունեցել են հոգնակի իմաստ: Այդ բառերը այժմ գործածվում են միայն և միայն Բ-ով:

4. ԱՆԵԶԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անեզական բառերը, անկախ այն բանից, եզակի՞ իմաստ էին արտահայտում, թե՞ հոգնակի, դիտվում էին որպէս հոգնակի և դրանց բայ ստորոգյալը գրվում էր հոգնակի թվով, որի մասին են վկայում հետևյալ փաստերը.

«Վատաւոցան զիւր ատաւին ծննդաբանութեան Հայոց Մեծաց» (Խորենացի, 89): «զի փառքն ոչ Լիւն անձնաւոր ինչ են, այլ ի յաջողութենէ ուրուք անուանին փառք» (Եղեիկ, 83): «Եւ ոչ Եւ-կինք շրջին» (Եղեիկ, 129): «Եւորա գնան, և երկինք կան անշարժ ետեղակալք» (Եղեիկ, 130): «Եւ այն են զարմանք» (Եղեիկ, 91): «Ընդ նոյն ատուրս լինին հարսանիք» (Խորենացի, 225): «և յորովայնէ ո՞յր Ելանեն սառնամանիք» (Եղեիկ, 148): «Միա ուտել, ասեն, ոչ են մեղք» (Եղիշէ, 29):

Բերված նախադասութիւնների մեջ անեզականները արտահայտում են եզակի թվի իմաստ, և այդ թվով էլ պետք է թարգմանվեն: Հետևյալ նախադասութիւնների մեջ, բնդհակառակը, անեզականները արտահայտում են հոգնակի թվի իմաստ:

«Եւ դժմ ամենեցուն ի ուրբ սեղանն հուլին» (Փարպեցի, 30): «այլ ի ձայնէ կռահարկութեան դարբնաց գօրանան, առեն, կապանքն» (Խորենացի, 190): «այլ ևս շարք շարագոյն անցն անցանիցեն բնդ քեզ» (Աղաթանգեղոս, 70, էջ 47): «այլ ազատ ի մեղադրանց ոչ

թողումը» (Խորենացի, 346)։ «Մեծաւ շարշարանօք և սկէսպէս տանջանօք վատթարէր զբազումս ի նոցանէ» (Նդիշէ, 23)։

Մի շարք անեղականներ իրենց բառիմաստային առանձնահատկություններից ելնելով՝ հոգնակի իմաստ չեն կարող արտահայտել, կամ կարող են արտահայտել միայն հազվագյուտ դեպքերում, ինչպես՝ կեանք, փառք, վարք, պարտք (պարտավորություն իմաստով)։ Այսպիսի բառերը միշտ կամ համարյա միշտ իմաստով եղակի են։ Բայց անեղականները իրենց մեծագույն մասով կարող են արտահայտել և եղակի, և հոգնակի իմաստ, ինչպես բաղանիք-բաղանիքներ, հարսանիք-հարսանիքներ, մեղք-մեղքեր, տաճանք-տաճանքներ, մեղադրանք-մեղադրանքներ և այլն։

Երբ գրաբարյան տեքստերում հանդիպում ենք այդ տիպի բառերի, բոլոր դեպքերում չէ, որ կարող ենք ճշտություն օրոշել արդյոք անեղականը եղակի իմաստով է գործածված, թե՛ հոգնակի։ Հետևյալ նախադասությունների անեղականները, օրինակ, թվի տեսակետից անորոշ են. «գործեաց զմեղս», «չինեաց զբաղանիս», «կառք ընթանան», «տեսի զվանս», «զիրք ասեն»։ Այսպիսի նախադասությունների մեջ անհնար է իմանալ՝ նա «մեղք է գործել, թե՛ մեղքեր», «բաղանիք է շինել, թե՛ բաղանիքներ», «կառք է ընթանում, թե՛ կառքեր» և այլն, ուրեմն և դրանք պարզություն ու բացահայտություն չունեն և խոսակցին պարզորոշ չեն կարող հաղորդել խոսողի միտքը։

Եվ ահա հենց այդ հանգամանքը՝ իմաստի ճշտության և բացահայտության պահանջը ստիպում էր, որ անեղականը ոչ բոլոր դեպքերում գիտվի իրեն հոգնակի բառ, այլ եթե նա եղակի իմաստ է արտահայտում, որոշ ձևով դրսևորի իր եղակի իմաստը։ Սա կատարվում է անեղական, բայց եղակի իմաստ արտահայտող բառերի հետ եղակի ստորոգյալներ կամ այնպիսի բառեր գործածելու միջոցով, որոնց թիվը ինքնին պարզ է։ Այսպիսի օրինակներ, միշտ է, սակավաթիվ, գտնվում են անգամ գրաբարի հնագույն տեքստերում, իսկ հետագայում դրանց թիվը ավելանում է։ Այդ մասին են վկայում հետևյալ փաստերը։

«Այս կեանքս պատերազմ է» (Նդիշէ, 216). «զի յայտնի լիցի պարծանք հաւատոցս մերոց» (Աղաթանգեղոս, 88, էջ 51). «զի որ միանգամ զսպի անդ զիրք» (Խորենացի, 351). «զի ի տեառն լինիցի նոցա վառձէ» (Փապստոս). «զինչ և պլտի է բեզ՝ արա զիս»։ «Երթ գնա դու յո սլտի է բեզ, թէ բեզ պլտի է» (Փապստոս). «հասեալ էր ի վերա նոցա նզովք»։ «զօրանայ շնորհք»։ «Եւ օրէնս իմն հաստատէ» (Խորենացի, 110)։ «Երկու աղայցեն ի մի երկանս» (Մտթ. Իդ. 41). «ի վանս ուրեմն», «ի վանս ուրեր», «վանաց միոջ», «ածէին կառս մի», «էին կուռք մի», «ի գրոցս յայսմանէ»։ Բայց բոլոր դեպքերում չէր, որ կարելի էր այս միջոցները կիրառել, և հաճախ նախադասության իմաստը անորոշ էր մնում։

5. ԱՆԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՎԵՐԱՅՈՒՄԸ

Անեղականության կատեգորիան այս նույն դրույթամբ լիզվում երկար պահանջվել չէր կարող, որովհետեւ նա այս կամ այն կերպ խանգարում էր իմաստի պարզությանը և բացահայտությանը։ Անեղական բառերի զարգացումը կարող էր ընթանալ երկու ձևով. ա) անեղական բառերից Բ-ի անկմամբ լեզուն կարող էր ստեղծել եղակի ձևեր. Բ-ով ձևերը գործածել միշտ հոգնակի, իսկ առանց Բ-ի ձևերը միշտ եղակի իմաստով. բ) բուն հոգնակիի համար ստեղծել նոր ձև, և Բ-ով ձևերը գործածել որպես եղակի ձևեր։

Մենք նախորդ էջերում արդեն ասել ենք, որ անեղական ձևերի հետ միասին գրաբարում երբեմն գործածվել են նաև եղակի ձևեր, ինչպես՝ կում, միտ, մեղ, մէջ, նզով, պլտ, օրէն և այլն։ Գուցե և այդ բառերը ստեղծվել են անեղականության կատեգորիայից խույս տալու համար (զարգացման առաջին ճանապարհը)։

Հենց այդ դրույթից էլ ելնում էին լատինարան հեղինակները, երբ անեղականների ծայրից Ի-ն չնչելով՝ վերացնում էին այս կատեգորիան գրաբարից։ Սակայն, ինչպես ցույց տվեց լեզվի պատմական զարգացումը, առաջին ճանապարհը չհաղթանակեց։ Հարց է առաջանում, թե ինչու։

Ա. Այտրենյանը այս երևույթը բացատրում է հետևյալ կերպ։

«Բայց հայ լեզվին ոգին և ազգային ճաշակը բնական կերպով մը խնդիրն որոշած էին. արդեն բուն հին ժամանակներին սկսյալ՝ միշտ ախորժելի եղած էր նաև շատ մը բառ ինքյան

¹ Օրինակների մի մասը տե՛ս Ա. Այտրենյան, Քննական բերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866, I, էջ 81։

Եռակիներեն ալ Բ հանգել, որ ստորին և հետին գարուց նոր լեզվին մեջ քանի գացած ավելի հաճախած է։ Այս երկու ճամբաներուն ընտրութիւնը մեջ անշուշտ այն սլարազան ալ մասն ունի՝ որ ի սկզբանե հետե հայ ականջները վարժած էին բուն հոգնակի անվանց բով առնեն ատեն ևզակի բայեր լսելու։ անտարակույս ժողովրդյան բերանը ավելի հաճախ՝ ինչպէս մեր մեջն ալ ցայսօրս՝ Սակայն երևոյթը ավելի խորն է։ Անեղականների ձևաբանական վերլուծութիւնից պարզվեց, որ շատ բառերի այս կատեգորիային պատկանելը բացատրվում է նրանով, որ Ի-ի մեջ համատեղվում էին և բառակազմական, և ձևակազմական ֆունկցիաները, ուրիմն և առանց Ի-ի այդ բառերը կզրկվեին ոչ միայն հոգնակի թվի գաղափարից, այլև բառային կերպարանքից ընդհանրապես։ Ահա այս երևոյթն է պատճառը, որ Եթե կամ, մեղք, օրկնք և այլ բառեր ստեպ-ստեպ կարող էին հանդես գալ նաև առանց Ի-ի, ապա լանցանք, շարշարանք, գրկանք, բարբարանք, պարծանք, մաղբանք և նման բառերը, որոնց մեջ ցայտուն կերպով դրսևորվում է Ի- ածանցի բառակազմական ֆունկցիան, երբևր առանց Ի-ի չէին կարող գործածվել, որովհետև այսպիսով նրանք կզրկվեին բառային կերպարանքից, քանի որ Բ մասնիկը նրանց մեջ ավելի շատ ոչ թե ձևակազմական, այլ բառակազմական ձևույթ էր։ Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ գրաբարում հոգնակի թվի կատեգորիան հանգես է գալիս որպես ուժեղ կատեգորիա։ շատ դեպքերում, չնայած որ բառը ունի եզակի ձև և ըստ իմաստի էլ եզակի է, բայց գործածվում է հոգնակի ձևով։ Այսպես, գրաբարում կա օդ որպես եզակի ձև։ Բայց Եզնիկը եզակի իմաստով գործածում է այդ բառի և՛ եզակին, և՛ հոգնակին, ինչպէս՝ «սատանայ ունէր իշխանութիւն շարժելու և փոփոխելու ղողոս, ըստ այնմ գոր Առաքելայն առէ՝ թէ՛ ըստ իշխանի իշխանութեան օղոյս այսորիկ։ Իշխան օղոյս այսորիկ կոչէ զնա՝ վասն յերկնիցն անկանելու և յօղս թափառելու» (էջ 148)։ Այստեղ շորս անգամ գործածված է օղ բառը։ Բոլորի իմաստն էլ եզակի է, բայց երկու անգամ գործածված է հոգնակի և երկու անգամ եզակի թվով։ Նույն ձևով էլ գրաբարում կան դաշն, քեկն, երկն և այլ եզակի ձևերը, բայց եզակի իմաստով ավելի շատ գործածվում են դրանց հոգնակիները՝ քիկունք, դաշինք, երկունք և այլն։ Հենց այս ձևով էլ նրանք անցել են արդի հայերենին (անցել է նաև դաշն ձևը)։

Լեզվի պատմական զարգացման ընթացքում աստիճանաբար նեղանում են Ի-ի ձևակազմական և ընդլայնվում՝ բառակազմական ֆունկցիաները։ վերջիվերջո Բ մասնիկը կորցնում է իր հոգնակի արժեքը, այլ մասնիկներ են անցնում նրա տեղը և այն հանդես է գալիս սոսկ որպես բառակազմական ածանց։ Ինչ չափով որ Բ մասնիկը զրկվում է իր հոգնակի իմաստից, այդ չափով էլ անեղական բառերը զրկվում են իրենց հոգնակի բնույթից և ըմբռնվում որպես եզակի։ Հնագույն գրաբարից բերեցինք օրինակներ և ցույց ավեցինք, թե ինչպես անեղականը երբեմն դիտվում էր որպես եզակի բառ։ Հետագա չբնութագրում այս երևոյթը ավելի է ընդարձակվում։ Այսպես, Հովհան Մամիկոնյանի մոտ գտնում ենք բազմաթիվ անեղականներ, որոնք գործածված են որպես եզակի բառեր, ինչպես.

«...սակայն կամք ողորմութեան գթացաւ...» (34). «Եւ շնորհք սուրբ հոգոյն մնացէ» (62). «Այս առաջին պահք եղաւ» (73—74). «Մնաց յնիկսոս սուրբ նշխարք Կարապետին» (76). «Աւելիցի փառք քո» (170). «Եթէ յայտնեցաւ իրքն» (198)։

Սկզբնապես Ի-ի հոգնակի իմաստի անհետացումը սկսվել է անեղականներից, նրանք են գիտակցվել որպես եզակի, իսկ նրանց հոգնակին կազմվել է այլ մասնիկներով, ինչպես՝ վանեաք, Բանան և այլն։ Անեղականության կատեգորիան մեծ գեր է խաղացել Ի-ի հոգնակի արժեքի էությունի և հայերենում այլ հոգնակի մասնիկների առաջացման ու տարածման պրոցեսում, երևոյթ, որ մեր քերականագիտության մեջ դեռևս լրիվ չի ուսումնասիրված։ Միջին հայերենում անեղականության կատեգորիան լեզվից արդեն անհետացել էր։ Բառերի մեծագույն մասը միջին հայերենում հոգնակի էր կազմում և Բ մասնիկի միջոցով, իսկ Ի-ով հոգնակի էին կազմում միայն ձայնավորով վերջացող բառերը (տանցիք, պախիք և այլն)։ Գրաբարյան անեղականները, ինչպես՝ ապրանք, զրկանք, իրաւունք, խելք, խօսք, կամք, մեղք, հայրենիք, կարիք և այլն, արտահայտում էին եզակի իմաստ։ Բերենը օրինակներ միջին հայերենից, ուր գրաբարյան անեղականները եզակի իմաստ են արտահայտում. «Շողափելիքն տաք լինի» (9). «Քաղանիքն սպտի»։ «Կարիքն լինի» (22). «Կուրծքն ցավի» (49). «մէջքն և ողնաշարն ցաւի» (78). «խելքն

¹ Ա. Այտրեյան, Քննական քերականութիւն, Ի, էջ 82—83։

² Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տաթևոյ, աշխատութեամբ և առաջարկով պատմ. գիտ. թեկնածու Ա. Արաքսյանի, Երևան, 1941։

աւերի» (138)¹. «Իրաւունք է» (16). «Կամքն լինի» (16). «մեղքն ի յառաջսորդաց շինքն է» (35)².

Եթէ հարկ էր լինում անեզականները դործածել հոգնակի թվով, ինչպէս ինքնին էր ընկնում և ավելանում էին եւ, վի մասնիկները, օրինակ՝ վաներ (29), իրաւներ (31), ձեռքի (44)², խօսովի (129, 130), աշվի (139), ոտովի (149)³.

Քանի որ անեզական բառերը միջին հայերէնում գիտակցվում էին որպէս եզակի, և ինչպէս զրանց մեջ ունենալ սոսկ բառակազմական նշանակութիւն, զրանց նմանակութեամբ կազմվում են Բ-ով վերջացող նոր բառեր, որոնք զրարարում չեն եղել, ինչպէս՝ աշխարհք, առուզնացք, բերանք, գտնգատք, գանգաւանք, գինք, գիհք, գարկք, ծեծք, ծեծանք, համարք, հաւերք, ջաղացք⁴:

Միջին հայերէնում Բ-ն դեռ լրիվ ձուլված չէր հիմքին: Անեզական բառերը հոլովվում էին գրարարածէ, օրինակ՝ գիրք-գրոց, մեղք-մեղաց, ձեռք-ձեռաց և այլն, իսկ հոգնակի կազմութեան ժամանակ Բ-ն ընկնում էր, օրինակ՝ գիրք-գրեր, ձեռք-ձեռքի և այլն: Կարծւոր զրում է, որ Թիւրքանցու մոտ (XV—XVI դդ.) հանդիպում է ունեւ ձեռ (էջ 194), և սա համարում է բացառութիւն: Այսպիսի մի ձև մենք հանդիպում ենք «Դատաստանագրքում» (XIII դ.)՝ վանեւ (էջ 34):

Ժամանակակից հայերէնում ինչպէս լրիվ ձուլվել է հիմքին, և զրարարյան անեզականները հոլովվում ու հոգնակի են կազմում սովորական բառերի նման, ինչպէս՝ մեղք-մեղքի-մեղքեր, կառք-կառքի-կառքեր և այլն:

6. ԱՆԵԶԱԿԱՆՆԵՐԸ ԲԱԶԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ բերականագիտութեան մեջ վաղուց նկատված է, որ բարակազմութեան ժամանակ անեզական բառերի վերջին Բ-ն զուրս է ընկնում: Մ. Արեղյանը այդ մասին գրում է. «Գրարարում կան բառեր, որոնք գործ են ածվում միշտ, կամ սովորաբար, հոգնակի Բ-ով իրեն անեզական բառեր, օրինակ՝ կառք, փառք, խելք, կյանք, քիմք, միտք/միտ, մեղք/մեղ, աշք/աշ, Բառակազմութեան (բարդութեան և ածանցման) ժամանակ առնվում է այսպիսի բառերի եզակին, առանց վերջին Բ բաղաձայնի, օրինակ՝ կառավար, փառապանծ, փառահեղ, սնափառ, խելառ, կենսագործել, քմահաճո, մտավոր, անմիտ, մեղավոր, անմեղ, շնորհալի և այլն»⁵: Նույնն է ասում նաև պրոֆ. Աճառյանը. «Անեզական բառերը կարող են դործածվել թէ՛ բարդութեանց մեջ, և թէ՛ առանձին ոճերի մեջ. առաջին դեպքում գործ են ածվում միշտ եզակի ձևով. երկրորդ դեպքում թէ՛ եզակի, և թէ՛ հոգնակի»⁶ (ընդգծումն իմն է—Մ. Ա.): Այս կանոնը ընդհանուր առմամբ ճիշտ լինելով՝ կարող է որոշ շտեման: Փաստերը ցույց են տալիս, որ անեզական բառերը բարդութեան մեջ կարող են առհայտնել Բ-ն և այն դեպքում, երբ նրանք հանդես են գալիս որպէս բառի վերջին բաղադրիչ, իսկ ամբողջ բարդութեանն ունի գոյականի նշանակութիւն, ինչպէս՝ արեւելք, արեւմուտք, վայրէջք, վերելք, լուսանցք, քղանցք, հացուտիք, ծխահանք/ծխելուց, նաև տիեզերք: Ուրեմն վերելք կանոնը պետք է սահմանել հետևյալ կերպ. անեզական բառերը որպէս բառի առաջին բաղադրիչ հանդես են գալիս առանց Բ-ի, օր. փառաւոր, որպէս բաղադրյալ բառի վերջին բաղադրիչ նրանք կարող են հանդես գալ և Բ-ով, օր. արեւելք, և առանց Բ-ի, օր. սնափառ: Ք-ով են հանդես գալիս այն ժամանակ, երբ բառը բառը գոյականի նշանակութիւն է արտահայտում:

Արդի հայերէնում հիմնականում պահպանվում է զրարարյան անեզականների բառակազմական այս գրութիւնը, այն է՝ բաղադրութիւնների մեջ Բ ունեցող բառերը զուրս են ձգում իրենց վերջին Բ-ն, ինչպէս՝ միտք-մտաւար, խելք-խելահաս, մեղք-մեղավոր և այլն: Բայց բուն

¹ «Մխիթարայ բժշկապետի Հերացոյ Զերմանց մխիթարութիւն», Վենետիկ, 1832 (փակագծերում նշանակված են էջերը):

² «Բատաստանագիրք Սմբատ իշխանի (Գուհադատարի)», Էջմիածին, 1918:

³ Ա մ ի բ ո տ վ ի ա թ Ա մ ա ս ի ա ջ ի, Օդոս բժշկութեան, խմբ. Ստ. Մալխասյանց, Երևան, 1910:

⁴ St. u. Karst Josef, Historische Grammatik des Kilikisch-armenischen, Strasbourg, 1901, էջ 103—104:

⁵ Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 198:

⁶ Հ. Աճառյան, Լիակատար բերականություն, հատ. 3, էջ 857:

որ բառերի հսկայական մեծամասնությունը բաղադրության մեջ է մտնում եզակի ուղղականի ձևով, ուստի և առանձին դեպքերում այդ բառերը ևս բաղադրության մեջ են մտնում ժամանակակից հայերենի եզակի ուղղականի ձևով, այսինքն՝ Բ-ով. օրինակ՝ անխելք, անխելքություն, ծակաշք, աշքացավ, սշքաբաց, սլեւորական, անպետք, կրծքաբաց, հանքատեր, վարքագրություն, հանքաբանություն, բերքատու, մորամուրը և այլն¹:

PLURALIA TANTUM В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

М. Е. АСАТРЯН

(Р е з ю м е)

В древнеармянском языке есть ряд существительных, имеющих только форму множественного числа, несмотря на то, что они имеют значение единственного числа. Такими словами являются: *կեանք* — жизнь, *աղօթք* — молитва, *միտք* — мысль, *անէծք* — проклятие, *դժոխք* — ад, *աչք* — очи, *օրէնք* — закон, *երկինք* — небо, *ճեղք* — грех, *վանք* — монастырь, *տիեզերք* — вселенная и т. д.

В армянских грамматиках такие слова называются *անկապական* — слова, не имеющие единственного числа, по-латински *pluralia tantum*.

Категория *pluralia tantum* характерна не только для армянского языка, но и для других индоевропейских языков. Проф. Ачарян считает, что истоки ряда групп *pluralia tantum* армянского языка следует искать в индоевропейской языке-основе.

В древнеармянском языке слова, входящие в эту категорию, составляют огромное количество; их число превышает тысячу.

В статье дается морфологическая и семантическая классификация слов, входящих в категорию *pluralia tantum*, на основе которой определяются их древнейшие слои.

В древнеармянском языке ряд слов имеет парные формы на *ք* и без *ք*, например *ալիք/ալի* — волна, *աղիք/աղի* — кишка, *անուրջք/անուրջ* — мечта, *երկինք/երկին* — небо, *ծնունդք/ծնունդ* — рождение, *մէջք/մէջ* — спина, *մորուք/մորու* — борода, *յօնք/յօն* — брови и т. д. В статье рассматриваются причины существования, употребления и дальнейшего исторического развития этих парных форм.

В среднеармянском языке категории *pluralia tantum* не существует. Исчезновение этой категории связано с изменением функции частицы *ք*.

В древнеармянском языке частица *ք* в основном употребляется в качестве формообразующей частицы, образуя множественное число имен, как, например: *բանք* — слово-слова, *դեռք-դեռ* — река-реки и т. д. Но она одновременно выполняет функцию словообразующего суффикса, образуя новые слова преимущественно от глагольных основ, как: *անէծք* — проклятие, *ընթացք* — ход, *Էլք* — выход, *Մուտք* — вход, *Հմայք* — обаяние и т. д.

В процессе исторического развития языка постепенно суживается формообразующая функция и расширяются словообразующие функции. В результате частица *ք* теряет значение выражения множественного числа, превращаясь в словообразующий суффикс.

В какой степени частица *ք* теряет функцию образования множественного числа, в такой степени слова, входящие в категорию *pluralia tantum*, теряют значение множественного числа и воспринимаются словами единственного числа.

Такие факты наблюдаются и в древнейших текстах грабара. В дальнейшем это явление распространяется шире, и в XI—XII вв. категория *pluralia tantum* исчезает из языка.

¹ Տե՛ս Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 198—199: